

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Սեպտեմբեր 1. *թ.* 1907. *Առաջադրութեամբ յայտնուեց ճեմարանի Վարչութեան, թէ Սինոդը Տ. Տեղակալի մակագրութեան համեմատ պատուիրել է Մայր Աթոռի գանձապահին հանդիսարանի նորոգութեան համար տալ* 205 *ռ.*

Սեպտ. 5. *թ.* 1922. *Ղարաբաղի կոնսիստորիայի Նախագահող Տ. Զաւէն վարդապետի անուամբ առաջադրութիւնով հաստատուեցին նոյն Թեմի Հոգևոր դպրանոցի նորընտիր հոգաբարձուները։*

Սեպտեմ. 6. *թ.* 1923. *Առաջադրուեց Ղարաբաղի կոնսիստորիայի Նախագահող Տ. Զաւէն վարդապետին Հաղբատի եկեղ. ծխ. դպրոցի տարաձայնութիւնների մասին ստոյգ տեղեկութիւններ հաղորդել։*

Սեպտեմ. 7. *թ.* 1927. *Յայտնուեց Կ. Պոլսոյ Հայոց*

պատրիարքական Տեղապահին թէ Մայր Աթոռի գանձապահ պ. Խաթանպօլլուեանի հրաժարականը իւր յարգելի պատճառներով ընդունուած է, և խնդրուեց նախ ծանուցանել պ. Խաթանպօլուեանին, որ իւր մօտ եղած 1420 զուշ. 30 փարա գանձանակադրամը ուղարկի Սինոդ և ապա նրա տեղ ընտրել նոր գանձապահ։

Սեպտեմ. 7. թ. 1928. Առաջադրուեց Երևանի Փոխթեմակալ Տ. Խորէն եպիսկոպոս Մուրադբէկեանին, կարգադրելու, որ Թեմական դպրանոցում իւրաքանչիւր դաս տևի 50 րոպէ և ոչ պակաս,

Սեպտ. 8. թ. 1930. Առաջադրութեամբ Ճեմարանի Վարչութիւնից պահանջուեց տեղեկութիւն թէ, Թիւրքիայից քանի աշակերտներ կան և ինչ պայմանով են ընդունուում Ճեմարան։

Սեպտմ. 10. թ. 1933. Ղարաբաղի կոնսիստորիայի նախագահող Տ. Զաւէն վարդապետի անունով առաջադրութեամբ հաստատուեց Շուշու Ս. Յովհաննէս եկեղեղեցու թադէոսեան դպրոցի ուսուցչական կազմը։

Սեպտմ. 13. թ. 133. Առաջադրուեց Թիֆլիզի Հայոց կոնսիստորիայի Նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսին Կովկասեան Հայոց Ուսուցչական միութեան կանոնադրութիւնից մի օրինակ ուղարկել։

Սեպտմ. 15. թ. 1939. Առաջադրութեամբ յանձնուեց Սինոդին պ. Լևոն Շաբանեանի Ս. Էջմիածնին մատաղադին նուիրած 15 ռուբլին։

Սեպտմ. 20. թ. 1944. յանձնուեց Սինոդին Ներքին գործոց Նախարարութեան հոգևոր դեպարտամենտի հեռագիրը, որով նոյն դեպարտամենտը խնդրում էր Ամերիկայի և Արևմտեան Եւրոպայի հայերին ևս կաթուղիկոսական ընտրութեան համար ծանուցողական հրավարտակ ուղարկել Կովկասեան Փոխարքայի միջոցով Ներքին գործոց Նախարարութեան ձեռքով։ (Այս կարգադրութիւնը հետևանք էր այն բանի, որ տարւոյս յուլիսի 10-ին ն. տ.

Ամերիկայի Հայոց դիմել էին Տ. Տեղակալին. և նորին Ամենապատուութեան, նոյն յուլիսի 20-ին հ. տ., մակագրութեան համեմատ Սինոդը միջնորդութիւն էր յարուցել կառավարութեան առաջ)։

Սեպտ. 19. թ. 1949. Գրութեամբ յայտնուեց Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքական Տեղապահին, թէ տարօնեցի Յովսէփ Եղոյեանը Տփխիսում չէ գտնուել։

Սեպտ. 28. թ. 1952. Առաջադրուեց Շամախու առաջնորդ Տ. Անանիա արքեպիսկոպոսին բացատրելու, թէ ինչ հիմնական պատճառ է ունեցել չհաստատելու Արմէնիքենդի կաթուղիկոսական պատուիրակների ընտրութիւնը։

Սեպտ. 28. թ. 1953. Առաջադրուեց Թիֆլիզի Հայոց կոնսիստորիայի նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսին յանձնարարել Նպաստամատոյց Յանձնաժողովին ուղարկել Սինոդին ի պահ 75 հազար ռուբլու կամ գումարը և կամ տոմսը՝ փոխած Սինոդի անունով։

ՔԱՂՈՒԱԾ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Սեպտեմբեր 2. թ. 590. Սինոդը լսեց Երևանի կոնսիստորիայի տարեցոյց մարտի 22-ի № 1850 յայտարարութիւնը Զանգեզուրի գաւառի Երիցաթումբ գիւղացի Բաղդասար Տէր Պետրոսեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային ընդունել Բաղդասար Տէր Պետրոսեանին հոգևոր կոչման մէջ և յանձնարարել Փոխ-թեմակալին ձեռնադրել նորան քահանայ Երիցաթումբ գիւղի ծխականների համար։

Սեպտեմբեր 5. թ. 598։ Սինոդը լսեց փաստաբան Գ. Տէր Խաչատրեանի անցեալ օգոստոսի 8-ի գրութիւնը, որով վերջինս խնդրում է աղատ համարել իրան Մ. Աթա-